ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քասախ, (098) 44-03-24, (093) 08-07-06 kasakh-village@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 219

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշումը, ինչպես նաև քաղաքացի Հովսեփ Մելիքյանի դիմումը՝ որոշում եմ

Բավարարել քաղաքացի Հովսեփ Գարեգինի Մելիքյանի դիմումը և տրամադրել Գ, Չաուշի փողոց թիվ 26 հասցեի հողամասում բնակելի տան, օժանդակ շինություններ և պարսպի կառուցման նախագծման թույլտվություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Ն. ՄԿՐՏՉՅԱՆ

2017թ. սեպտեմբերի 4
Գ.Քասախ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քասախ, (098) 44-03-24, (093) 08-07-06 kasakh-village@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 220

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԱՎԱՅՐԻ ՎԵՐԱԾՎԱԾ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՐԹԵՑՄԱՆ ԵՎ ԱՂԲԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ «ՆԱԻՐԻԻ ԲԵՐՐԻՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ-Ի ՀԵՏ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 42-րդ հոդվածի 16-րդ կետի պահանջներով՝ որոշում եմ

Հաշվի առնելով, որ «Մաքուր Հայաստան» ծրագրի շրջանակներում ՀՀ Կոտայքի մարզի Քասախ համայնքի աղբավայրի վերածված տարածքի հարթեցման և աղբի տեղափոխման աշխատանքների կատարման գնման պայմանագիր ձեռքբերելու նպատակով երկու անգամ հայտարարված մրցույթները, մասնակցության հայտերի բացակայության պատճառով, չեն կայացել, 2017թվականի հունիսի 22-ին «Նաիրիի Բերրիություն» ՍՊԸ-ի հետ մեր կողմից կնքված պայմանագրում կատարել փոփոխություն և կնքել համաձայնագիր՝ պայմանագրի գումարը ավելացնելով 500 052 (հինգ հարյուր հազար հիսուներկու) ՀՀ դրամով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Ն. ՄԿՐՏՉՅԱՆ

2017 թ. սեպտեմբերի 04
Գ.Քասախ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քասախ, (098) 44-03-24, (093) 08-07-06 kasakh-village@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 221

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը, ինչպես նաև քաղաքացի Կնյազ Ղազարյանի դիմումը՝ **որոշում եմ**

1. Բավարարել քաղաքացի Կնյազ Գարսնանի Ղազարյանի դիմումը և թույլատրել Ե. Չարենցի 8-րդ փողոց թիվ 8 հասցեում իրականացնել բնակելի տան կառուցման շինարարական աշխատանքներ, տրամադրել շինարարության թույլտվություն:

2. Հանձնարարել Քասախի համայնքապետարանի առաջատար մասնագետ Գ. Սիմոնյանին նախապատրաստել և համայնքի ղեկավարի հաստատմանը ներկայացնել «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը:

3. Պահանջել քաղաքացի Կնյազ Գարսնանի Ղազարյանից շինարարական աշխատանքներն սկսել միայն անհարժեշտ նախագծի և շինարարության թույլտվության առկայության դեպքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Ն. ՄԿՐՏՉՅԱՆ

2017թ. սեպտեմբերի 05
Գ.Քասախ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քասախ, (098) 44-03-24, (093) 08-07-06 kasakh-village@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 222

ՀԱՍՑԵԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի, ինչպես նաև Քասախ համայնքի ավագանու 2001 թվականի հոկտեմբերի 9-ի N 13 որոշմամբ և հիմք ընդունելով քաղաքացի Արմեն Հակոբյանի դիմումը՝ որոշում եմ

Քաղաքացի Արմեն Հակոբյանին պատկանող 084-007 կադաստրային ծածկագրով 0.058 հա բնակելի կառուցապատման հողամասը և դրա վրա գտնվող բնակելի տունը (սեփականության վկայական թիվ 1787807) վերահասցեավորել և նախկին գ. Քասախ 32ա հասցեի փոխարեն տրամադրել Ա. խաչանովի 3-րդ փողոց թիվ 11 հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Ն. ՄԿՐՏՉՅԱՆ

20 17 թ. սեպտեմբերի 06
Գ.Քասախ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քասախ, (098) 44-03-24, (093) 08-07-06 kasakh-village@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 223

ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 28-Ի N 214 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասի պահանջներով ***որոշում եմ՝***

Քասախ համայքի ղեկավարի 2017 թվականի օգոստոսի 28-ի N 214 որոշման մեջ, որոշման հիմքերում «Ղեկավարվելով» բառից հետո ավելացնել «Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 70-րդ հոդվածով,» բառերը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ **Ն. ՄԿՐՏՉՅԱՆ**

20 17թ. սեպտեմբերի 8

Գ.Քասախ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քասախ, (098) 44-03-24, (093) 08-07-06 kasakh-village@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 224

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 27-ի N 1107-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ, ինչպես նաև Քասախ գյուղական համայնքի ավագանու 2001 թվականի հոկտեմբերի 9-ի N 13 որոշմամբ՝ ***որոշում եմ***

1. Ըստ ներկայցվող հատակագծերի Քասախ համայնքի 07-065-0036-0032 կադաստրային ծածկագրով հողամասը բաժանել մասերի և կազմել սեփականության իրվունքի գրանցման վկայականներ:
2. Առանձնացվող 0.0100 հա հասարակական կառուցապատման հողամասին տրամադրել Ռ. Սաֆարյան փողոց թիվ 12/2 հասցեն, իսկ մնացած 0.0234 հա հասարակական կառուցապատման հողամասի հասցեն թողնել նույն Ռ. Սաֆարյան փողոց թիվ 12/1 հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Ն. ՄԿՐՏՉՅԱՆ

2017 թ. սեպտեմբերի 8
Գ.Քասախ